ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

ԵՂԵՌՆԻ ԹԵՄԱՆ Գ. ԷՄԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. ահասարսուռ, մոխիր, կռունկ, պար, Սասնա ոգի, որբևայրի կին, անպատված հարս:

Ключевые слова и выражения: страх, ужасы, пепел, прах, журавль, танец, сасунский дух, вдова, обесчещенная невеста.

Եղեռնի թեման, որ տասնամյակներ շարունակ գտնվում էր «յոթ փակի» տակ, անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո, երբ գրական զարգացումները մթնոլորտային փոփոխությունների բարերար ազդեցությամբ մտան առաջընթացի նոր հուն, դարձավ մեր գրականության թերևս ամենաշատ արծարծվող թեմաներից մեկը:

Ընդամենը մի քանի տարվա ընթացքում լույս տեսան ավագ և միջին սերնդի գրողների (Ս. Խանզադյան, Հր. Քոչար, Պ. Սևակ, Ս. Կապուտիկյան, Հ. Դավթյան, Մ. Գալշոյան, Ն. Ադանյան և այլն) տասնյակ վեպեր ու վիպակներ, պատմվածքների ժողովածուներ, պոեմներ, որոնց մեջ «համազգային ողբերգության մասշտաբները, տառապանքի հոգևոր փորձը խորացնում են գրականության զգացմունքային ու ինտելեկտուալ ընդգրկումները, հաղորդում փիլիսոփայական խորհրդածությունների լայն թափ, մղում ակտիվ դիրքորոշման ու համարձակ պատկերավորության»[1]:

Հատկանշական է, որ գրողները «ճակատագրորեն վճռորոշ ողբերգականն ու հերոսականը գեղարվեստականացնելիս երբեք չէին դիմում վերքի վրա աղ լցնելու կամ ազգային էժան սնապարծություն բորբոքելու անընդունելի հնարքին»[2]:

Գրողների հիմնական խնդիրը «մերօրյա հայացքով պատմության տրամաբանության հայտնաբերումն ու ազգային հիշողությունը, արմատի զգացողությունը վառ պահելն էր»[3]:

---

[1] Գիլավյան Մ., Պ. Սևակը և 1960-ական թթ. գեղարվեստական զարգացումը, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», 2002, № 4, էջ 23:

[2] Աղաջանյան Ս., Եղեռնը վերապրածների կենսափորձային ճշմարտություններն ու հոգեկերտվածքը, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», 2014, №1, էջ 56:

[3] Նույն տեղում, էջ 56-57:

Համազգային ողբերգության թեմային հենց այս մոտեցումներով է անդրադարձել Գ. Էմինը՝ ոչ հեռավոր անցյալի ահասարսուռ իրադարձություններից ապագայի համար դասեր քաղելու ընդգծված նպատակաուղղվածությամբ:

Մենք դարերի ընթացքում «գահ ու թագ չենք ունեցել», բայց «արքա է ամեն մի հայ», «զորք ու բանակ չենք ունեցել», բայց «սպա է ամեն մի հայ»: Դարերի ընթացքում՝ «զատված», եղեռնի հետևանքով՝ «հատված», բայց միշտ «մի», հատկապես՝

Երբ սպառնում է թշնամին
Մեր դարավոր անմահ երթին
Եվ այս ժայռին թառած բերդին,
Որ հայրենիք ենք անվանում(I, 17):

Արմատի զգացողությունը վառ պահել, նշանակում է վառ պահել պատմական հիշողությունը.

Զարմանալի է, որ ես չեմ եղել,
Սակայն…հիշում եմ,-
Երբ Սասնա ինչ-որ անառիկ գյուղում
Թափվեց մեր արյան կաթիլն առաջին,
Որ պիտի հետո…հորդ հեղեղ դառնար,
Ես՝ մազերն արձակ որբևայրի կին,
Ես՝ անպատված հարս,
Վիրավոր զինվոր,
Անդոկից մինչև Զեյթուն ու Տեր-Զոր,
Փախած աշխարհի կողմերը բոլոր,-
Հուդզոնի ափին,
Նեղոսի հովտում,
Պառնասի լանջին,
Փարիզի մայթում
Փնտրում էի իմ այրված տունը,
Արյան մեջ կորած իմ հայրենիքը (I, 24-25):

Աշխարհում ինչքան հայ՝ այնքան էլ Հայաստան. եղեռնով ցրված ողջ աշխարհում, բայց “հայրենի կարոտով միաբան!, կռունկ՝ հայոց մոխիրի թևերին, հայոց արցունքներից աչքերը թրջված, որ ուր էլ գնաց՝ «ամեն ջրում, ամեն հողում՝ վտարանդի հայի տեսավ, ուր էլ գնաց՝ մոխիր դարձավ բույնը նորից»:

Բայց աշխարհի բոլոր անկյուններում հայի տեսակը միշտ էլ զարմանալի է եղել օտարների համար, զարմանալի՝ իր անկոտրում ոգով, վերընձյուղվելու իր համառությամբ, իր արյան ձայնով ու կանչով, իր ողջ պատմությամբ, որի յուրաքանչյուր էջը ոչ միայն ցավալի կորուստներով է

լրացված, այլև հոգևոր մաքառումների, հանուն հայրենյաց նահատակված ու սրբացված մեծերի կենսապատումներով:

Եղեռնը հատեց մեր շիվերը, բայց չկարողացավ հասնել մեր արմատներին, որովհետև նրանք խոր էին արմատավորված ու սնվում էին ոչ միայն հայրենի հողից, այլև մեր հոգևոր մաքառումների կենսատու ավիշներով:

Մեր լեզուն էր մեզ օգնում դիմակայելու ահեղ փորձություններին, մեր այբուբենը, որ այբուբեն չէ լոկ, որ «բերդ է անմատույց, դուռ է փրկության», «խունկ է խորանի, կնիք ինքնության» ու «նախահիմքն է մեր»:

Եղեռնը չկարողացավ հատել մեր կենաց ծառը՝ ի հեճուկս ողջ աշխարհի և ի զարմանս նրա, ու հայերը՝

Երբ տեսան էլ վառոդի հոտ չի գալիս
Եվ երբ տեսան՝
Էլ չի թափվում հողին արյուն,
Եվ երբ տեսան՝
Եկավ աշուն, եկավ գարուն,
Առանց ահի, կոտորածի,
Բաց արեցին սուփրեն հացի,
Զուռնեն խոսեց բերանացի,
Եվ Արագած լեռան գոգին
Զարթնեց կրկին Սասնա ոգին:

Ու թնդում է պարը՝ հուժկու, առնական.

Պարեց Սասունն ու ողջ աշխարհը հասկացավ,
Որ պար չէ սա, այլ՝ մի երկրի քաջ պատմություն,
Որ պատմությունն անգամ ունի հպարտություն,
Եվ չի հաղթի ոչինչ այն հին ժողովրդին,
Որ այս ջանքով,
Ու այս կամքով
Պարել գիտի... (I, 80)

Եղեռնի թեմայով գրված Գ. Էմինի ստեղծագործություններին յուրահատուկ չէ ողբն ու լալկանությունը, վերքի վրա «աղ լցնելու» անիմաստ մոտեցումը: Բանաստեղծը անցյալի ողբերգական իրադարձություններին անդրադառնում է պատմության փորձից դասեր քաղելու, ազգի ներուժը համախմբելու, միաբանվելու, բոլոր պարագաներում՝ հույսը միայն սեփական համախմբվածության վրա դնելու նպատակաուղղվածությամբ:

Բանաստեղծը պատմության փորձը լուսաբանում է նորօրյա աշխարհաքա-ղաքական զարգացումների համապատկերում՝ յուրահատուկ կոչ հղելով սերունդներին՝ ուսանելի դասեր քաղել անցյալից, լինել միաբան ոչ միայն օրհասական պահերին, այլև ընդհանրապես, չկտրվել ազգային արմատներից ու վառ պահել պատմական հիշողությունը:

Դա է ազգային ինքնության ու արժանապատվության պահպանման՝ դարերի ընթացքում փորձության ենթարկված ու հաստատված միակ ճշմարիտ ուղին:

Ք. Համբարձումյան

Եղեռնի թեման Գ. Էմինի ստեղծագործություններում

Ամփոփում

Անհատի պաշտանունքի հաղթահարումից հետո եղեռնի թեման դարձավ հայ գրականության հիմնական թեմաներից մեկը: Այն Գ. Էմինի ստեղծագործություններում արծարծվեց պատմական հիշողություն ազգային ինքնությունը հաստատելու նպատակադրումներով:

К. Амбардзумян

Тема геноцида в произведениях Г. Эмина

Резюме

После развенчания культа личности тема геноцида в армянской литературе стала одной из главных. В произведениях Г.Эмина эта тема затрагивается в связи с необходимостью освежить историческую память и сохранить национальную идентичность.

K. Hambardzumyan

Genocide Motif in G. Emin's works

Summary

After having overcome the cult of personality, the motif of genocide became one of the core motifs in Armenian literature. The motif of genocide in G. Emin's works is introduced for the national identity to be regained through the historical memory.